

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Առաքինութիւնը երկու տեսակ է՝ Աստուածախօսային ու բարոյական: Աստուածախօսայինը կը բաժնուի երեքի՝ հաւատքի, յոյսի եւ սիրոյ: Բարոյականը կը բաժնուի չորսի՝ խոհեմութեան, արդարութեան, արիութեան եւ ժողովարարութեան, որոնք առանց իրարու չեն գործեր: Քանզի, ով որ կատարեալ հաւատք ունի՝ աներկմիտ յոյս ու անկեղծ սէր ունի: Եւ ի նշան կատարեալ սիրոյ արդիւնքի՝ կը պահանջուի բարոյական առաքինութիւններու գործեր, որոնք կը կատարուին խոհեմութեամբ, արիութեամբ ու ժողովարարութեամբ:

Ասոնցմով կարծես աստիճանով կը բարձրանայ ղէպի կատարեալ առաքինութիւն եւ արժանի կը դառնայ վայելելու ու ժառանգելու երկնային փառքը, որ խոստացաւ Աստուած իրեն սիրողներուն: Ուստի առաքինութիւնները խիստ կարեւոր միջոցներ եւ ճամբաներ են հասնելու համար երկնային փառքին:

Սակայն ճշմարիտ առաքինութիւնները կախում ունին Աստուծոյ շնորհքէն ու անով կ'արդիւնաւորուին, իսկ Աստուծոյ շնորհքը կը պարգեւուի Քրիստոսի չարչարանքներու արդիւնքէն: Ուստի ճշմարիտ առաքինութիւնները միայն Քրիստոնեաներուն մէջ կը գտնուի եւ միայն քրիստոնեաներն են ճշմարիտ առաքինի:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Հաւատացեալ կնոջ մը վկայութիւնը:

Ի՛նչ սարսափելի է, երբ հոգին կ'ուզէ Յիսուսի հետեւիլ, մեղքերու թողութիւն կ'աղերսէ, բայց հանգիստ չունի: Կարծես Սատանան կ'ըսէ. «Դուն կ'ուզես ապաշխարել եւ Աստուծոյ գաւա՞կ դառնալ. թոյլ չէ՛մ տար: Ես իմ իրաւունքներս ունիմ. դուն ինձի՛ կը պատկանիս»: Պէտք է շա՛տ աղօթել, որ կապանքները փշրուին, եւ բացուի ղէպի հոգեկան հանգրստութիւն տանող ճամբան: Սատանան իրեն ենթարկուածներուն ո՛չ միայն հոգիները, այլ մարմինները եւս կը պահէ ամուր շղթաներուն մէջ: Ճիշդ այստեղ ի յայտ կու գայ անոր գաղտնիքը. սկիզբը լեռներ կը խոստանայ, իսկ յետոյ՝ անգուլթօրէն կը խարէ:

Խեղճ այրի մը կը գրէ. «27 տարի, որ սարսափելի հիւանդութեամբ մը կը տառապիմ: Որքան գիտեմ, կախարդութեան հետեւանք է: 26 տարեկանիս հիւանդացեր եմ. հիմա 53 տարեկան եմ: Լման 27 տարի կ'ընէ, որ Սատանան կը տանջէ մարմինս ու հոգիս: Դպրոցի մէջ շատ կը սիրէի կրօնի դասերը, եւ մանուկ տարիքէս ղէպի Աստուած հակում ունէի: Շատ մը բա»...

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐՈՂԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՂՄ ԵՆԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՂՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

ԿԻՐԱԿԻ՝ 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 38

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 3.13-21

ՏՕՆ ՎԵՐԱՅՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ

Ոչ ոք երկինք ելաւ բացի մարդու Որդիէն, որ իջաւ երկինքէն՝ ուր կը գտնուէր: Եւ ինչպէս որ Մովսէս պղնձեայ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ պէտք է Մարդու Որդին բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց, ո՛չ թէ որպէսզի Որդին աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր, արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար:

Եւ դատապարտութիւնը այս է. հակառակ անոր որ լոյսը աշխարհ եկաւ, մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է, լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են:

Կրնա՞՞ք Մեզի բացատրել հայկական իսաչի չեպիս Մասին

Այո, Հայկական Խաչը միշտ դատարկ կը ներկայացուի եւ անոր վրայ չենք հանդիպիր խաչուած Քրիստոսին: Ինչո՞ւ: Որովհետեւ այդպիսով մարդիկ ուզած են խորհրդանշել Քրիստոսի յաղթանակը մահուան առջեւ:

Հայկական խաչերը երբեմն կը ներկայացուին զարդարուած, խաղաղ, տերեւներով եւ ցորենի հասկերով: Ասոնք կը խորհրդանշեն կեանքը որ ծնունդ կ'առնէ խաչէն, որ այլապէս մահուան ծառայող գործիք մըն էր:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԽԱՉՎԵՐԱՅ




Ամեն տարի, Սեպտեմբեր 11-ի եւ 17-ի միջեւ գուգադիպող Կիրակի օրը, Հայաստանեայց Եկեղեցին կը յիշատակէ իր հիմն գտաւարներէն մէկը՝ Խաչվերացը: Ինչպէս անունը կը պարզէ Խաչվերացը հայ ժողովուրդին սիրելի խորհրդանիշ դարձած խաչին նուիրած տօներէն մէկն է:

Խաչի նուիրուած Խաչվերացի տօնը Խաչը փառաբանելու, Խաչը հպարտութեամբ վեր բարձրացնելու տօն մըն է: Այս տօնը հիմնուած է պատմական յստակ եղելութեան մը վրայ, որ տեղի ունեցած է Քրիստոնէութեան սկիզբի տարիներուն: Պատուական դրագր հետեւեալն է.- Պարսիկները Երուսաղէմը արքայի տաճարը կը փախցնեն Քրիստոսի խաչը: Հերակլ կայսրը իր կարգին կ'արշաւէ Պարսկաստան եւ կը վերատիրանայ սուրբ խաչին: Զայն վերցնելով՝ կը վերադառնայ Կ. Պոլիս եւ ժողովուրդին առջեւ հպարտութեամբ բարձրացնելով՝ մուտք կը գործէ Բաղաթ:

Խաչը վեր առնելու այս առաջին եղելութիւնը կը վերագրուի Երուսաղէմի առաջին եպիսկոպոս Յակոբ Առաքեալին, որ խաչը վեր առնելով՝ օրհնեց ժողովուրդը անոր ըսելով. «Խաչի բո, Քրիստոս, երկիրպագանեմք», այսինքն՝ «Քրիստոս, Խաչիդ առջեւ կը ծնրադրենք ու կ'երկրպագենք»:

Խաչվերացի օրը Հայաստանեայց եկեղեցիէն ներս կը կատարուի թափօր եւ Անդաստան, որուն ընթացքին օրհնութիւն եւ փառք կը տրուի Աստուծոյ իր տուած բարիքներուն եւ առատաձեռնութեան համար եւ յատուկ աղօթքներով կ'օրհնուին աշխարհի չորս ծագերը:

ԱՂՕԹՔ ԽԱՉԻ ԱՊԱԽԻՆՈՒԹԵԱՆ



Քու Խաչը, մեզի թող ապաւեն ըլլայ, Տէր Յիսուս, երբ որ երեսա Հօր փառքով՝ լուսաւոր ամպերու մէջ: Այն ժամանակ, մենք չենք ամչնար՝ քեզ հաւատացողներս, այլ Քու մեծ գօրութեամբ կ'ուրախանանք, Քու աջ կողմը, իբրեւ լուսոյ որդիներ, իբրեւ ցերեկուայ որդիներ: Ամէն:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՄ ԽՐԱՏՆԵՐԸ

ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՄՄԱԽԻՆ

Քրիստոնեաները պէտք չէ ատեն գիրար: Այն ինչ որ Աստուած Մովսէսի տուած օրէնքով ըսաւ, թէ՛ «Մի՛ սպաններ» (Ելք 20.12), Յովհաննէս անտարանիչ կը գրէ. «Ան որ ատէ եղբայրը, մարդասպան է» (Ա. Յովհ. 3 15), որովհետեւ սպանութեան սկիզբը ատելութիւնն է. մարդ նախ կ'ատէ ապա կը խորհի սպաննել:

Արդ, ցոյց տանք, թէ ուրկէ սկսաւ մարդասպանութիւնը, քանի՞ տեսակ է սպանութիւնը եւ ի՞նչ է պատիժը սպանողներուն:

Մարդասպանութիւնը սկսաւ Կայէնէն, որ սպաննեց իր եղբայրը, Աբել. եւ այս երկուքը Ադամին որդիներն էին: Կայէն ինչո՞ւ սպաննեց: Իր գործերը չար էին, իսկ Աբելին գործերը՝ բարի: Աբել սիրուած էր Աստուծոյ կողմէ եւ իր ծնողէն. ահա ասոր համար Կայէն ատեց իր եղբայրը:

Ատելութիւնը ըլլալով բոլոր մեղքերուն սկիզբը ու պատճառը, այդ ատելութենէն ու նախանձէն ծնաւ քեղքը եւ ոխը, իսկ յիսկալութենէն ծնաւ նենգելը, խաբելն ու սուտ խօսիլը: Արդարեւ, ան խաբեց եղբայրը որ դաշտ երթան գրօնելու, բայց անխղճօրէն եւ անողորմ սրտով ու գազաններու կատղած բարքով սպաննեց գայն: Եւ որովհետեւ եօթը մեծ մեղքեր գործեց, Աստուած եօթը մեծ պատուհաս ու պատիժ դրաւ անոր վրայ: Աստուծոյ Կայէնի եօթը մեղքերը.-

ա.- Աստուծոյ որպէս նուէր իր պըտուղներէն ու բերքէն վատն ու անպէտքը խորշակահարները տարաւ, որոնց չհանցաւ Աստուած:

բ.- Երկրորդ մեղքը այն է որ նախանձեցաւ եղբոր եւ ատեց գայն, որովհետեւ ան իր ամէնէն ընտիր ու լաւ գառնուկը Աստուծոյ նուէր տուաւ...

Շարունակելի Յովհաննէս Երզնկացի

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ՉԱՐԻՆ ԴԷՍ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԶԷՆՔԵՐԸ

«Ի վերջոյ, գորացէ՛ք Տիրոջմով եւ իր ամենակարող գօրութեամբ: Զեր վրայ առէ՛ք Աստուծոյ սպառագինութիւնը, որպէսզի կարենաք Սատանային հնարքներուն դէմ դնել: Որովհետեւ մեր պատերազմը մարդոց հետ չէ, այլ՝ երկինքի տակ գտնուող չար ոգիներուն, իշխանութիւններուն եւ պետութիւններուն, այս խաւար աշխարհի տիրակալներուն դէմ:

Ուստի Աստուծոյ սպառագինութիւնը առէ՛ք, որպէսզի երբ չար օրը գայ՝ կարենաք ետ մղել Զարին հարուածները եւ ամէն ինչ ընէ՛ք՝ կանգուն մնալու համար:

Հետեւաբար պատրաստ եղէ՛ք. ոչ մարտութեամբ ամրապնդեցէ՛ք ձեր մէջքը, արդարութիւնը հազէ՛ք գրահի պէս եւ խաղաղութեան Աւետարանը բարոզելու պատրաստակամութիւնը հազէ՛ք կօշիկի պէս: Եւ այս բոլորին վրայ, հաւատքի վահանը առէ՛ք որպէսզի կարենաք մարել Զարին արձակած բոլոր միացող նետերը: Առէ՛ք նաեւ փրկութեան սաղաւարտը եւ Սուրբ Հոգիին սուրը, այսինքն՝ Աստուծոյ խօսքը: Այս բոլորին հետ աղօթեցէ՛ք, աղօթեցէ՛ք եւ խնդրեցէ՛ք տեւաբար Սուրբ հոգիին օգնութեամբ: Անոր համար ալ արթուն հսկեցէ՛ք կատարեալ յարատեւութեամբ աղօթելով բոլոր հաւատացեալ եղբայրներուն համար»:

Եփեսացիներու 6.10-18

**ԵՍԱՑԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
49.13-23**

Ուրախացի՛ր երկինք, ցնծա՛ երկիր, ուրախաճայն աղաղակեցե՛ք, ո՛վ լեռներ, Տիրոջ արդարութիւնը պատմեցե՛ք, ո՛վ բլուրներ, որովհետեւ Տէրը իր ժողովուրդին ողորմեցաւ եւ իր ժողովուրդին խոնարհները մխիթարեց:

Երուսաղէմի ժողովուրդը կ'ըսէր. *«Տէրը զիս լիցց ու մոռցաւ»:*

Բայց Տէրը կ'ըսէ. *«Միթէ՛ մայր մը կրնա՞յ իր դիեցուցած գաւակը մոռնալ, կամ իր որովայնէն ծնած երեխային չգթայ. քայց նոյնիսկ եթէ այդպիսի մայր մը գտնուի, ես թե՛ղ պիտի չմոռնամ ընաւ:*

Տե՛ս, ահա, թե՛ղ պիտե՛րուս մէջ նկարեցի, եւ աւերակ պարիսպներուդ պատկերը միշտ աչքիս առջեւ է:

Շուտով գաւակներդ կը վերադառնան, մինչ թե՛ղ քանդողներն ու աւերողները կը հեռանան:

Շուրջդ նայէ՛ եւ տե՛ս, արդէն գաւակներդ կը հաւաքուին ու թե՛ղի կու գան: Եւ ես, կենդանի Աստուածս, կ'ըսեմ.՝ առնե՛ք թե՛ղ պիտի ծածկեն պատմունանի պէս եւ առնեցմով պիտի զարդարուիս հարսի պէս:

Աւերակներդ եւ քանդուած ու կործանած քաղաքներդ շուտով նեղ պիտի գան բնակիչներուդ համար, եւ թե՛ղ հարստահարողները պիտի հեռանան:

Օտարութեան մէջ կորսուած գաւակներդ պիտի դառնան եւ ըսեն.՝ «Այս տեղը նեղ է մեզի, տեղ տուր որ բնակինք»:

Շարունակել Աստուածաշունչէն

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ԳԱՐԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ
6.14-18**

Գալով ինձի, քաւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծեցամ: Այդ խաչին միջոցաւ մեղքի աշխարհը մեռած է այլեւս ինձի համար, ինչպէս ես մեռած եմ այդ աշխարհին համար: Կարելորդ մարդուս թլփատուած կամ անթլփատ ըլլալը չէ, այլ նոր արարած ըլլալը: Թող Աստուծոյ խաղաղութիւնն ու ողորմութիւնը ըլլան բոլոր անոնց հետ՝ որոնք այս սկզբունքին համաձայն կ'ապրին. բոլոր անոնց՝ որոնք իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն:

Այսուհետեւ, խնդրեմ, ոեւէ մէկը աշխարհիկ հոգեբով թող զիս չնեղէ, որովհետեւ ես Յիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս վրայ վերքերուն սպիները կը վկայեն:

Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ: Ամէն:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑՄՆՈՒԹԻՒՆԸ
ՍՍՏՈՒՄԾԱՇԱՐԿԵՆ:**